ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյանի, Վահան Հովհաննեսյանի, Արծվիկ Մինասյանի, Արտյուշ Շահբազյանի և Ռուզաննա Առաքելյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Գտնում ենք, որ ներկայացված նախագծի ընդունումը խնդրահարույց է, ինչի կապակցությամբ ստորև ներկայացնում ենք հետևյալ նկատառումները.

1. Գտնում ենք, որ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի երկարաձգման հնարավորությունից հրաժարվելու օրենսդրական հիմքեր ստեղծելու փոխարեն առավել նպատակահարմար է նրանց հնարավորություն ընձեռել հրաժարվելու՝ ներմուծվող ապրանքների մասով օրենքի 6.1-ին հոդվածը կիրառելուց։ Այս մոտեցումը, կարծում ենք, իրավական առումով ավելի ճիշտ է, քանի որ երկարաձգման հնարավորությունից հրաժարվելու դեպքում պարզ չէ, թե հոդվածի մյուս դրույթները նրանց համար կիրառվելու են, թե ոչ։

Ընդ որում, հնարավոր չարաշահումներից և իրավական հիմնախնդիրներից խուսափելու նպատակով առավել նպատակահարմար է սահմանել, որ հարկ վճարողի նկատմամբ օրենքի 6.1-ին հոդվածը չի կիրառվում՝ նրա գրավոր հայտարարության հիման վրա։ Տվյալ դեպքում գրավոր հայտարարությունն էլ հիմք կհանդիսանա ներմուծված ապրանքների մասով մաքսային վճարների գծով պարտավորություն առաջադրելու համար։

Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են հրաժարվել ներմուծվող ապրանքների մասով սույն հոդվածի կիրառումից՝ գրավոր հայտարարություն ներկայացնելով։

2. Նախագծի 2-րդ հոդվածով ներկայացված մոտեցումը, որի համաձայն հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերը հաշվարկվում են ապրանքների օտարման կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, համարում ենք ոչ նպատակահարմար՝ հետևյալ նկատառումներով՝

1) եթե հարկ վճարողին հնարավորություն է ընձեռվում ինքնուրույն որոշելու մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի երկարաձգման հնարավորությունից օգտվելու նպատակահարմարությունը, և հարկ վճարողը որոշում է օգտվել այդ հնարավորությունից, ապա առավել տրամաբանական և արդարացի կլինի հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերը հաշվարկել ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետի երկարաձգման օրվանից սկսած.

2) եթե հարկ վճարողը «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածում նշված ապրանքները ներմուծում է հետագա

վաճառքի նպատակով, ապա նա կարող է ի սկզբանե հրաժարվել մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի երկարաձգման հնարավորությունից, և այս պարագայում հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի հաշվարկման խնդիր ընդհանրապես չի առաջանա։

Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի առաջին մասում նշված ապրանքները մինչև նույն մասով սահմանված ժամկետների լրանալն օտարվելու կամ օգտագործման իրավունքով այլ անձանց հանձնելու (բացառությամբ վերակազմակերպման դեպքերի) դեպքում վճարումը հետաձգված՝ հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարները, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի վճարման հետաձգման ժամկետից մինչև գործարքի իրականացման օրը հաշվարկվող տույժերը, գործարքի իրականացման օրվան հաջորդող 10-օրյա ժամկետում վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ որպես մաքսային մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե հավաքագրվող գումարներ։ Նշված ժամկետում ավելացված արժեքի հարկի գումարը չվճարվելու դեպքում չվճարված (չմարված) գումարի նկատմամբ տույժերի հաշվարկը շարունակվում է։»։

3. Ելնելով իրավական տեխնիկայի կանոններից՝ առաջարկում ենք նաև նախագծի 1-ին հոդվածում «16 հունիսի» բառերը փոխարինել «14 մայիսի» բառերով, քանի որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 1997 թվականի մայիսի 14-ին։

Հայտնում ենք նաև, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածի հետ կապված կան այլ խնդրահարույց

հարցեր, որոնց լուծման կապակցությամբ առաջարկում ենք «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝

1) 6.1-ին հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերությունում՝

ա. հանել «հոդվածի առաջին» բառերը,

բ. առաջին «սահմանված» բառից հետո լրացնել «վճարման» բառով,

գ. «ժամկետն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի» բառերը փոխարինել «ժամկետի» բառով.

2) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն հոդվածի երկրորդ և չորրորդ մասերին համապատասխան հաշվարկված և մաքսային մարմիններին վճարված ավելացված արժեքի հարկի գումարները (առանց հաշվարկված տույժերի) ենթակա են հաշվանցման՝ սույն օրենքով սահմանված դեպքերում և կարգով»։

Հաշվի առնելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագիծն ընդունելի կհամարի ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում։ Հայաստանի Հանրապետության կառավարությունը պատրաստակամ է համագործակցել նախագծի հեղինակների հետ՝ նախագծի լրամշակման նպատակով։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ